ԻԱԿ նախագահ

Շուշան Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ 2016 թվականի ընթացքում ՀՀ ՊԵԿ Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ մուտքագրված դիմումների քանակը կազմել է 10 016, որից՝ 2 717-ը քաղաքացիների կողմից ստացված, 7 211-ը՝ կազմակերպությունների, 88-ը՝ հասարակական կազմակերպությունների: 2017-ին ՊԵԿ Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով մուտքագրվել է 14 623 դիմում, որից 4011-ը քաղաքացիների կողմից ստացված, 10 453-ը՝ կազմակերպությունների, 159-ը՝ հասարակական կազմակերպությունների: 2018-ի առաջինից երրորդ եռամսյակներում նույն համակարգի միջոցով մուտքագրվել է 16 658 դիմում, որից՝ 5036-ը՝ քաղաքացիների, 11 479-ը՝ կազմակերօությունների, 143-ը հասարակական կազմակերպությունների կողմից ստացված:

2016 թվականի ընթացքում ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման և հեռախոսազանգերի կենտրոնի (ՀԶԿ) կողմից ստացվել է 263 580 հարցադիմում: Հարցադիմումներից 262 966-ը ստացվել են հեռախոսակապի, իսկ մնացած 614-ը էլեկտրոնային փոստի միջոցով: 2017 թվականի ընթացքում ՀԶԿ ստացվել է 156 767 հարցադիմում, որից 156 081-ը՝ հեռախոսակապի, իսկ մնացած 686-ը էլեկտրոնային փոստի միջոցով: 2018 թվականի 1-3 եռամսյակների ընթացքում ՀԶԿ ստացվել է 153 475 հարցադիմում: Հարցադիմումներից 152 904-ը ստացվել են հեռախոսակապի, իսկ մնացած 571-ը էլեկտրոնային փոստի միջոցով:

2016թ. ընթացքում ՀՀ ՊԵԿ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից զանգվածային լրատվության միջոցներից ստացվել է տեղեկություն ստանալու 62 բանավոր և 874 գրավոր հարցում, որից 43-ն ուղղորդվել է այլ գերատեսչություն, 31-ի պատասխանը մերժվել է՝ հստակ նշելով մերժման հիմքերը, 862-ին՝ տեղեկատվությունը տրամադրվել է: 2017թ.-ին ՀՀ ՊԵԿ

տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից զանգվածային լրատվության միջոցներից ստացվել է տեղեկություն ստանալու 109 բանավոր և 919 գրավոր հարցում, որից 58-ն ուղղորդվել է այլ գերատեսչություն, 44-ի պատասխանը մերժվել է՝ հստակ նշելով մերժման հիմքերը, 926-ին՝ տեղեկատվությունը տրամադրվել է: 2018-ի առաջին երեք եռամսյակներում ստացվել է 74 բանավոր և 689 գրավոր հարցում, որից 74-ն ուղղորդվել է այլ գերատեսչություն, 71-ի պատասխանը մերժվել է՝ հստակ նշելով մերժման հիմքերը, 618-ին՝ տեղեկատվությունը տրամադրվել է:

ՀՀ ՊԵԿ հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի կողմից ստացված հարցադիմումների և դրանց պատասխանների վերաբերյալ 2016թ.-ի, 2017թ.-ի, 2018թ.-ի ամենամսյա հաշվետվությունները տեղադրված են ներքոհիշյալ հղումով՝ http://petekamutner.am/si.aspx?itn=siCallCenter:

ՀՀ ՊԵԿ տեղեկատվության և
հասարակայնության հետ կապերի բաժին